

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍՊՐՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. 2016 թվականի հոկտեմբերի 4-ի Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 87-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5) ծխախոտի արտադրանքը (այդ թվում՝ ծխախոտի արդյունաբերական փոխարինիչները, սիգարները, սիգարելաները): Սույն կետի կիրառության իմաստով՝ ծխախոտի արտադրանք են համարվում նաև ԱՏԳ ԱԱ 2404 11 000, 2404 12 000 0 և 2404 19 000 ծածկագրերին դասվող՝ ծխախոտ կամ վերականգնված ծխախոտ կամ նիկոտին կամ դրանց փոխարինիչներ պարունակող ապրանքները՝ նախատեսված առանց այրման ներշնչելու համար, ինչպես նաև ԱՏԳ ԱԱ 2404 91 000 ծածկագրին դասվող՝ նիկոտին պարունակող արտադրանքը՝ նախատեսված մարդու օրգանիզմ նիկոտին մատակարարելու համար.»:

Հոդված 2. Օրենսգրքի 88-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի՝

ա. առաջին պարբերության «1-ին, 2-րդ, 3-րդ, 10-րդ, 14-րդ և 15-րդ» բառերը փոխարինել «10-րդ, 14-րդ, 15-րդ, 16-րդ և 17-րդ» բառերով,

բ. աղյուսակը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հ/Հ	Ապրանքի ծածկագիրը՝ ըստ ԱՏԳ ԱԱ-ի	Ապրանքախմբի անվանումը	Հարկման բազայի չափման միավորը	Ակցիզային հարկի դրույքաչափերը (դրամ)		
				2027 թվականի փետրվարի 1-ից	2028 թվականի հունվարի 1-ից	2029 թվականի հունվարի 1-ից
1.	2207	էթիլային սպիրտ	1 լիտր (100- տոկոսանոց սպիրտի վերահաշվար- կով)	7600		
2.	2208 (բացառությամբ 2208 20 290 0 2208 20 890 0 2208 90 330 0 2208 90 380 0 2208 90 480 0 2208 20 2208 30 2208 40)	սպիրտային խմիչքներ	1 լիտր	4600		
3.	2208 20 290 0 2208 20 890 0 2208 90 330 0 2208 90 380 0 2208 90 480 0	պտուղներից և (կամ) հատապտուղներից պատրաստված օղի	1 լիտր	2500		
4.	2208 20	կոնյակ, բրենդի և այլ սպիրտային թուրմեր	1 լիտր (100- տոկոսանոց սպիրտի վերահաշվար- կով)	4000		
5.	2208 30 2208 40	վիսկի, ռոմ և այլ սպիրտային թուրմեր	1 լիտր	10000		
6.	2203 00	գարեջուր	1 լիտր	200		
7.	2204	խաղողի գինի	1 լիտր	210		
8.	2205	վերմուտ և խաղողի այլ գինիներ	1 լիտր	1400		
9.	2206 00	խմորման ենթարկված այլ ըմպելիքներ (խնձորի սիդր, պերրու (տանձի սիդր), մեղրաըմպելիք), պտղային, հատապտղային, մրգային և այլ գինիներ	1 լիտր	210		

10.	2402 (բացառությամբ 2402 10 000 01 2402 90 000 01 2402 10 000 02 2402 90 000 02)	ծխախոտի արտադրանք	1000 հատ	20500	21500	22600
11.	2402 10 000 01 2402 90 000 01	սիգար	1000 հատ	820000		
12.	2402 10 000 02 2402 90 000 02	սիգարեղա	1000 հատ	25000		
13.	2403 (բացառությամբ 2403 11 000 0 և 2403 19)	ծխախոտի արդյունաբերական փոխարինիչներ	1 կգ	2100		
14.	2403 11 000 0 2403 19	ծխախոտի արդյունաբերական փոխարինիչներ	1 կգ	2800	3600	4600
15.	2404 11 000	ծխախոտի արտադրանք	1000 հատ	5200	6500	8200
16.	2404 12 000 0 2404 19 000	ծխախոտի արտադրանք	1 միլիլիտր	150	200	250
17.	2404 91 000	ծխախոտի արտադրանք	1 կգ	2800	3200	3700
18.	2710 19 7 - 2710 19 9 3403 19 100 0 3403 19 900 0 3403 99 000 0	քսայուղ	1 կգ	680		
19.	2710 12	բենզին	1 տոննա	54100		
20.	2710 19 1 - 2710 19 6	դիզելային վառելիք	1 տոննա	17600		
21.	2709 00 2710 20 2710 9	հում նավթ, նավթամթերք	1 տոննա	36600		
22.	3811	նյութեր (հավելանյութեր)	1 տոննա	54100		

23.	3819 00 000 0	արգելակման, հիդրավլիկ և այլ հեղուկներ՝ պատրաստի, նախատեսված հիդրավլիկական փոխանցիչների համար, 70% զանգվածային բաժնից պակաս՝ բիտումային ապարներից ստացված նավթ կամ նավթամթերք չպարունակող կամ պարունակող	1 կգ	680
24.	2711 (բացառությամբ 2711 11 000 0 2711 21 000 0)	նավթային գազեր և գազանման այլ ածխաջրածիններ	1 տոննա	1400
25.	2711 21 000 0	սեղմված բնական գազ	1 տոննա	46000».

2) 2-րդ մասի աղյուսակը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

	«2027 թվականի փետրվարի 1-ից	2028 թվականի հունվարի 1-ից	2029 թվականի հունվարի 1-ից
Ակցիզային հարկի հաշվարկման գործակից	1.03	1.06	1.09».

3) 6-րդ մասն ուժը կորցրած ճանաչել.

4) 7-րդ մասի «135000» թիվը փոխարինել «167400» թվով:

Հոդված 3. Օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2027 թվականի փետրվարի 1-ից, բացառությամբ սույն օրենքի 3-րդ հոդվածի, որն ուժի մեջ է մտնում 2027 թվականի հունվարի 1-ից:

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

Վ. ԽԱՉԱՏՈՒԹՅԱՆ